?????-????

??????

Саят-Нова

Պոեզիա

«Public Domain»

Саят-Нова

Պոեզիա / Саят-Нова — «Public Domain»,

© Саят-Нова
© Public Domain

Содержание

* * * 5
* * * 6
* * * 7
* * * 8
* * * 9
* * * 10
* * * 11
Конец ознакомительного фрагмента. 12

Սայաթ-Նովա
Պոեզիա

* * *

Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս, խիլքտ հիմարին բաբ մի՛ անի,
Էրազումըն տեսածի հիդ միգի մե հեսաբ մի անի,
Յիս խոմ էն գըլխեն էրած իմ, նուրմեկանց քաբաբ մի' անի,
Թե վուր գիդիմ բեզարիլ իս, ուրիշին սաբաբ մի՛ անի:

Չը կա քիզ պես հուքմի-հեքիմ՝ դուն Ռոստոմի Զալ, թաքավուր.
Ասկըտ ասկերումըն գոված՝ հա'մդ ունիս, գոզալ թաքավուր.
Թե էսանց էլ սուչ ունենամ՝ գլուխս արա տալ, թաքավուր,
Մըտիկ արա քու Ստեղծողին՝ նահախ տիղ ղազաբ մի՛ անի:

Յարալուն հեքիմն էնդուր գուզե՝ դի'ղ տալու է, ցա'վ տալու չէ.
Քանի գուզե արբաբ ըլի՝ ղուլըն աղին դավ տալու չէ.
Դու քու սիրտըն իստակ պահե, յագի խոսկըն ավտալու չէ.
Աստծու սերըն կանչողի պես դըռնեմետ ջուղաբ մի՛ անի:

Ամեն մարթ չի՛ կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է.
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է:
Բունիաթըս ավաղ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է՝
Սելավի պես, առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի՛ անի:

Քանի գուզե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի պակսի.
Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ՝ մեջլիսներուն սազ չի պակսի.
Թե կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարիս մե մազ չի պակսի.
Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի

* * *

Մեջլումի պես կորավ յարըս,
Լե'յլի ջան, ման իմ գալի յանա-յանա,
Էրվեցավ խունի ջիգհարըս,
Արնի պես աչկս է լալի յանա-յանա, յանա-յանա:

Բլբուլի նման լացիլ իմ,
Աչկիրըս արնով թացիլ իմ,
Էշխեմետ հիվանդացիլ իմ,
Պառկած իմ դըժար հալի յանա-յանա, յանա-յանա:

Էշխեմետ դառիլ իմ յիզիդ,
Հալվեցա, մաշվեցա քիզիդ,
Ռա'հմ արա, մե խոսի միզիդ՝
Բե'մուրվաթ, ձեն իմ տալի յանա-յանա, յանա-յանա:

Էրվում իմ, կանչում իմ ա~ման.
Ծուցրտ բաղ, ունքիրըտ քաման.
Աշխարիս մեչըն քիզ նըման
Չիմ տեսած, ման իմ գալի յանա-յանա, յանա -յանա:

Մանուշակ բաց արած հովին,
Կարմիր վարթ, ծաղիկ հուտովին,
Շատ մի լացնի Սայաթ-Նովին,
Ա'չկի լուս, կսկծալի՝ յանա-յանա, յանա-յանա:

* * *

Արթար դատե, չէ՞ վուր թաքավուր իս դուն,
Վրաստանում տեր ու զորավուր իս դուն.
Մեկն ինձ կոսե՝ «գընա մաշված շուր իս դուն»,
Մեկն էլ կոսե՝ «մե հոտած ջրրհուր իս դուն...»:

Վուչ հարսնախոս ունիմ, վուչ էլ կողակից,
Մեջլիսումն էլ նուր խաղք արին, ծաղրեցին.
Յիս ռամիկ իմ, ինձի վուխչ-վուխչ թաղեցին.
Ո՞ւմ առաջ էլ սրտիս ցավը մաղեցի,
Վուխչն ինձ ասին՝ «մե անպատիվ հուր իս դուն»:

Սազը քոքած, ձեռիս բռնած, հազըրված,
Թաքավուրի մոդ գընացի զարթըրված.
Ինձ յիդ տըվին, վունցոր փուշըս կոտըրված.
Էրնեկ լիզուն չիմանայի յիս նըրանց.
Ասին՝ «գընա, էրեսըտ սիվ մուր իս դուն»:

Աստծու կամոք մարթըս օղորմած պիտի.
Սարն էլ սարին կու հանդիպի, ով գիտի,
Է'րնեկ մենակ ինձ ծեծելով խըրատիր,
Կամ քու ձիռով ինձ յիդ տայիր, անպատվիր,
Իմ հոքևուր մինձ ծնուղքը վուր իս դուն:

Թեգուզ չարթին, ջանըս փետով վեր հատին,
Շունչըս բիրնիս յիս ինձ քիզնից չիմ զատի.
Ծովը կընգնիմ, թե վուր Քուռն ինձ ազատի...
Սայաթ-Նովա, քու լիզվովըն ցավ դատի,
Հալբաթ դարդ ու ցավի մե ախպուր իս դուն:

* * *

Առանց քիզ ի՞նչ կոնիմ սոյբաթն ու սազրն
Ձիոնեմես վեր կոծիմ չանգիրրն մեմեկ.
Ձունքի ուշկ ու միտկրս իրար շաղեցիր՝
Փահմես կու հիռացնիմ հանգիրրն մեմեկ:

Մե դուգունրն էրկու դաղին ի՞նչ անե,
Մե նոքարրն Էրկու աղին ի՞նչ անե,
Մե բաղմանչին էրկու բաղին ի՞նչ անե,
Փեյվանդ գուզե թազա տրնգիրրն մեմեկ:

Ղուրթ ին ասի փիր ուստաքար ղադիրրն.
«Բաղ շինեցի, վարթրն քաղից վադիրրն».
Ձափեն յիս քաշեցի, սափեն յադիրրն.
Բաղիփն էկավ միզ, էս բանգիրրն մեմեկ:

Առանց քիզ ի՞նչ կոնիմ աշխարիս մալրն.
Ձի'մ անի քալագրն, չի'մ անի ղալրն,
Կու հաքնիմ մազեղեն, կու հաքնիմ շալրն,
Կերթամ ու ման զու քամ վանքիրրն մեմեկ:

Բրլքամ մե մարթ ռաստ գա, վուր ինձ խրրատե,
Գո'զալ, քու էշխեմեն սիրտրս ազատե.
Կանց յոթրն իմասնասիրացրն շատ է
էս քու Սայաթ-Նովու բանքիրրն մեմեկ

* * *

Աշխարհիս մե փանջարա է, – թաղերումեն բեզարիլ իմ.
Մըտիկ տըվողըն կու խուցվի, – դաղերումեն բեզարիլ իմ.
Էրեգ լավ էր կանց վուր էսօր, – վաղերումեն բեզարիլ իմ.
Մարթ համաշա մեկ չի՛ ըլի, – խաղերումեն բեզարիլ իմ:

Դովլաթն էյթիբար չունե, յիփոր կերթա ուրուշ-քարով.
Լավ մարթն էն է' գլուխըն պահե աշխարումըս էյթիբարով.
Աշխարըս մեզ մընալու չէ' իմաստնասիրաց խաբարով.-
Գուզիմ թրոչի բըլբուլի պես, – բաղերումեն բեզարիլ իմ:

Ո՞վ կոսե թե յիս կու ապրիմ առուտեմեն ինչրու մուտըն'
Աստըձու ձիռումըն հիշտ է մարթու աշխարք ելումուտըն.
Ղուրթս էնդուր ճանփա չէ գնում' շատացիլ է խալխի սուտըն.
Քըսանըն' մե ղուլ չին պահում, – աղերումեն բեզարիլ իմ:

Աշխարըս միզ մընալու չէ, քանի նըստինք զող ու սափին.
Հում կաթնակիր-Աթա՛մի զաթ, նա՛լաթ ըլի էտ քու բափին.
Համփիրութինըս հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին.
Դոստիրըս դուշման ին դառի – յաղերումեն բեզարիլ իմ:

Սայաթ-Նովեն ասաց' դարդըս կանց մե ճարըն շատացիլ է.
Չունիմ վաղվան քաղցըր փառքս, հիմի դարըն շատացիլ է.
Բըլբուլի պես էնդուր գու լամ' վարթիս խարըն շատացիլ է.
Չի՛ն թողնում վախտին բացվելու, – քաղերումեն բեզարիլ իմ:

* * *

Ամէն մե մըտիկ տալով տարար խիլքս, քամալոս,
Է՛յ,նազանի,ռահմ արա,դուն մի դառնա աշալըս.
Հէնց ձէռովդ կապեցիր,էնպես բաց էր իղբալըս.
Էշխեմեդ հիվանդացա,չիս հարցնում իմ հալըս.
Քիզիքիզ մըտիկ արա,փոշմանիլու վախտըն է:

Իմ թալնիլը քու բանն էր,չասացիր ի՞նչ իս անում.
Սըրտով սիրածըս դու՛ն իս,էլ ինչի՞ իս արմանում,
ՈՒրիշնիրու խոսկիրով կապած յարես յիդ անում.
Աճկըս ճանապարհիդ է, ինչի՞ իս շատ ուշանում.
Մե խալվաթ ոթախումը բարիշիլու վախտն է:

Քու պատվական գըլուխըդ դուն ավարա մի՛ անի.
էս իմ խունի ջիգարս հազար պարա մի՛ անի,
Իմ ու քու սըրտի բանը դիփ աշքարա մի՛ անի,
Արութինի շախ սիրտը մեկ էլ յարա մի՛ անի.
Կամով ու ճիտ անէլով փաթաթվիլու վախտըն է:

* * *

Վունց օր վուր ղարիբ բուլբուլը մե տարով բաղին կարոտ է,
Էնենց գու լա քո սիրողը՝ ձեռիդ յարաղին կարոտ է.
Դուն ուրիշի հիդ մի' խոսի, քու ճուրտը աղին կարոտ է.
Հասիլ է ծուցիդ շամամը՝ օսկե թաբաղին կարոտ է:

Մե զաղ չը կա՝ գուման ածիմ, ասիմ, էն նըման է գունքըդ,

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.